

ԿԼԱՐԱ ՍՍԱՏՐՅԱՆ 77 ԳԱԱ ԴԱԻ

Ա. ԲԱՐԵՆՈՒՂԱՐՅԱՆԻ ԴԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՉԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1950-ական թվականների վերջերին հայրենիք վերադարձավ խորհրդային բանտերից, ճանքարներից և հարկադիր աքսորավայրերից հրաշքով փրկված, անվանի հայագետ Սեղրակ Բարիսուդարյանը: Նա ձեռնամուխ եղավ տարիներ առաջ կիսատ ու թերի բողած գիտական աշխատանքներին: Յ. Օրբելու՝ իր սիրելի ուսուցչի խորհուրդներով նա ձեռնարկեց իրեն հոգեհարազատ՝ հայ վիմագրության հավաքման, վերծանման, հրատարակման դժվարին, բայց և խիստ կարևոր գործը:

Մասի և Օրբելու երազանքն էր՝ տեսնել հրատարակված հայ վիմագրության հատորները գիտական որոշակի սկզբունքների կիրառմամբ: Սակայն հայ մշակույթի հարուստ այդ ժառանգության հրատարակության խնդիրը մինչև 1960-ական թվականների սկիզբը մնում էր անիրագործելի:

Իր ուսուցչի հետ, Սեղրակ Բարիսուդարյանը, բազմաթիվ հանդիպումների ընթացքում, ծավալում էին լայն քննարկումներ՝ ապագա դիվանագույն կառուցվածքի, արձանագրությունների հավաքման մեթոդների, լուսանկարների, տառանիշների, գրչագրերի և զանազան այլ հարցերի շուրջ: Այս կարևոր ելակետային խնդիրներն էին հենց դրվելու դիվանների հրատարակման հիմքում:

Ժամանակը, բնությունը, ինչու չեն նաև մարդկային գործոնը, ավերման էին ենթարկում հուշարձանները և նրանց վրա փորագրված արձանագրությունները. անհրաժեշտ էր հանդես բերել աշխատասիրություն, ջանք ու եռանդ՝ օր առաջ փրկելու կործանումից դարերի խորքից մեզ հասած այդ ժառանգությունը: Արցախի հուշարձանների վիճակը առավել քան մտահոգիչ էր. հայտնի պատճառներով անհրաժեշտ էր շտապել:

Միայն միացյալ արշավախմբի դեպքում կարող էին հայ մասնագետները մուտք գործել Ղարաբաղ: Խնդիրը դժվարին էր, բայց իրազործելի: 1960 թվականին Հայաստանի և Ադրբեյջանի գիտությունների ակադեմիաների համաձայնությամբ, երկու հանրապետությունների տարածքների վրա սփռված երկու ժողովուրդների պատմության և մշակույթի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող հայերեն և արաբատառ արձանագրությունների հավաքումը և իրատարակումը դարձավ իրատապ ու անհետաճգելի: Միացյալ արշավախումբն իր աշխատանքները սկսեց Լեռնային Ղարաբաղից: Գիտարշավի ընդհանուր դեկավարն էր՝ Սեղրակ Բարխուդարյանը: Գիտարշավին հայկական կողմից մասնակցել են Գ. Կարախանյանը, Գր. Գրիգորյանը, Ս. Ավագյանը, Արտ. Վրույրը, Ա. Մանուչարյանը, իսկ Ադրբեյջանական կողմից՝ Մ. Նեյմատովան. Յուս. Յուսիֆովը, Ա. Գուլիելմ, Յ. Զիդիին, Սուլեյմանովը: Համատեղ արշավախմբի աշխատանքները տևել են չորս տարի՝ մինչև 1964 թ.: Իր արշավախմբի հետ Սեղրակ Բարխուդարյանը շրջում էր ողջ Արցախը, իսկ նրա հարակից որոշ շրջաններ՝ (Լաշին, Քյալբաջար, Խանլար, Գետարակ) ոչ ամբողջովին: Եղել են վայրեր, որտեղ որոշ արգելվների պատճառով հուշարձանը կամ տարածքը դուրս է մնացել հետազոտողի տեսադաշտից: Գիտարշավի ընթացքում հայտնաբերվել են նոր նյութեր, իսկ բազմաթիվ արձանագրություններ էլ՝ վաղուց արդեն գոյություն չունեին:

Արցախի հուշարձանների և վիճագիր արձանագրությունների հավաքման ու իրատարակման գործում մասնակից են եղել անցյալի բազմաթիվ ուսումնասիրողներ՝ Շախաբունյանցը, Զալայյանցը, Մ. Բարխուտարյանցը, Ե. Լալայանը, Խ. Դայյանը, Մ. Տեր-Մովսիսյանը, Գ. Յովսեփյանը և Բարխուդարյանի սիրելի ուսուցիչ՝ Յ. Օրբելին:

1909 թ., տակավին ուսանող, Անիի պեղումների մասնակից Յովսեփ Օրբելին Մաօի հանձնարարականով, սկսում է զբաղվել նեֆրիտյան դաշույնի երախակալի վրայի արձանագրությամբ, որն ազդարարում էր տիրոջ անունը՝ ԿԱՍՍԱՆ-ԶԱԼԱԼ Իշևլս ԽԱՉԵՆՈ (3):

Անվանի իշխանն ապրել էր 13-րդ դարում՝ Խաչենում: Յիշյալ դաշույնի մշակութային արժեքի խորը գիտակցմամբ, Օրբելին մեկնում է Արցախ: Նա 17 օր ընդամենը մնում է Խաչենում, որի ընթացքում ծանոթանում և ուսումնասիրում է մի շարք հուշարձաններ՝ Կոշիկ անապատ, Սեծիրանից Ս. Յակոբա վանք, Առաջաձորի եկեղեցի, Գանձասար,

Յավուց պտուկ, Խաղարի վանք և Դադի վանք:

Այս հուշարձաններից հավաքվում է մոտ 300 արձանագրություն, որոնց հրատարակությունը հետաձգվում է վիմագիր տառատեսակների բացակայության պատճառով: Հետագայում Օրբելին նպատակահարմար է գտնում նյութը հրատարակել փոքր ժողովածուներով: Առաջին ժողովածուն ընդգրկում է մոտ 100 արձանագրություն, որոնք վերաբերում էին Գանձասարի և Յավուց Պտուկի հուշարձաններին: Քաղաքական իրավիճակների խառնաշփոթում այն այդպես էլ չի հրատարակվում: Տարիներ անց՝ Օրբելու կողմից սրբագրված և պահպանված միակ օրինակը Սեղրակ Բարիսուղարյանի կողմից ընդգրկվեց Արցախի պրակի համապատասխան բաժնում: Արցախյան արձանագրություններում առկա են շինարարական, հուշարձանների վերակառուցման, վերանորոգման, նվիրատվական տեղեկությունները: «Արցախի տարածքում գտնված հուշարձանների ժամանակագրական և ոճական առանձնահատկությունները նույն են, ինչ որ Յայաստանի այլ վայրերում», - գրում է Սեղրակ Բարիսուղարյանը¹:

Իր կենդանության օրոք նա ավարտին հասցրեց Արցախի արձանագրությունների ժողովածուն, որը կազմեց «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 5-րդ պրակը՝ ընդգրկելով 1071 արձանագրություն: Պրակը հրատարակվեց նրա մահից 12 տարի հետո՝ 1982 թվականին:

Սեղրակ Բարիսուղարյանը՝ ամբողջովին գրադարձ լինելով դիվանների հրատարակման խնդիրներով, ժամանակ չեղ գտնում գրադարձ լինելու վիմական բնագրերի առանձին բնագավառների քննական վերլուծություններով: Արցախի պրակի նյութերը պատրաստելիս նա պատմաբանին բնորոշ հեռատեսությամբ կարևորում էր որոշ պատմամշակութային խնդիրների հրատապ ուսումնասիրությունը: Իր վերջին՝ «Եջեր Արցախի և հայ-աղվանական առնչությունների պատմությունից» աշխատության մեջ նա անդրադառնում է Արցախի և հարևան շրջանների քաղաքական պատմամշակութային հիմնախնդիրներին: Աշխատության մեջ առաջին անգամ վեր է հանում Համամ իշխանի տապանագրի արձանագրությունը, որը հայտնաբերվել էր Սոֆուլո-Շիգրանակերտ կամ Գյավուր Ղալա կոչվող ավերակներից: արձանագրությունը

¹ Ս. Բարիսուղարյան, Դիվան հայ վիմագրության, Արցախ, Վ պրակ, 1982 թ., էջ 9:

ունի բացարիկ սկզբնաղբյուրային նշանակություն¹: Ցավալի է, որ այդ աշխատությունը մինչև այժմ մնում է անտիպ:

Ս. Բարիսուդարյանի անձնական արխիվում պահպանվել են տասնյակ նամակներ. հեղինակներից գրեթե բոլորը՝ դաշտային Ղարաբաղի բնակիչներ են: Մարդիկ լսելով, որ Հայաստանից եկած գիտնականները ուսումնասիրում են Լեռնային Ղարաբաղի հնությունները, ոգերված և պատրաստակամ խնդրում են, որ իիշյալ արշավախմբերը այցելեն նաև իրենց գյուղերը: Դատկապես նամակները շատ են Շամխորի հայաբնակ Բարսում, Զարդախլու, Մարտունի, Սալեր, Օլագիր, Բաղա, Նուզգեր գյուղերից:

Ստորև ներկայացնում ենք մի հատված՝ նրան ուղղված նամակից. «Ընկեր Բարիսուդարյան, մեր կողմներում ոչ մի գիտական արշավախումբ չի եղել և կորչում են հնությունները. խնդրում ենք մի արշավախումբ դրկեք: Մեր հայ գյուղերը Ձեզ մեծ օժանդակություն ցույց կտան ամեն խնդրում, միայն ծեռնարկեք այդ գործը»:

Դնությունների կորստյան ցավով էր ապրում նաև 82-ամյա Թադևոս Դաշյանը՝ ծնունդով Դաշքեսանի շրջանի Զագլիկ գյուղից:

Բարիսուդարյանը մեկն էր, հոգսերը՝ շատ. անարդարությունները ալեկոծել էին նրա հոգաշխարհը: Նա չէր կարող չգնալ Արցախ աշխարհ, չքայլել նրա սարերով ու ծորերով, չմտներ նրա մթին անտառները՝ հայերեն արձանագրություն փնտրելու հույս ու հավատով՝ հաղթահարելով բազում դժվարություններ: Նա սիրեց հայոց աշխարհի այդ չքնաղ անկյունը: Արցախցինների կողմից իրեն ուղղված բազում հարցերին պատասխանում էր. «Ամուր մնացեք այս հողի վրա, դա է փրկությունը»:

Իսկ իր կազմած Արցախ կոթողային հատորը ամենանշանավոր փաստակավերագրական ժողովածուն է՝ Արցախի հայկականությունը վերահաստատող հիմնարար վկայություններից մեկը:

¹Տես Ս. Բարիսուդարյան, Արցախ, Վ պրակ, 1982 թ., էջ 135-136: Տես նաև Ս. Բարիսուդարյան, «Տեղեկագիր», ԳԱ, 1964, N 1, էջ 61-64: